

Հունիսի 9-ին Հայաստանում գտնվող ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, անդրադառնալով այսպես կոչված «Չանգեզուրի միջանցքի» մասին ադրբեջանական կողմի նկրտումներին, նշել է՝ երկաթուղային երթուղին համաձայնեցված է, ավարտվում է ավտոերթուղու եւ այն ռեժիմի համաձայնեցումը, որը սահմանվելու է. «Այն լինելու է պարզեցված եւ հենվելու է հայկական տարածքի ինքնիշխանության ճանաչման վրա: Այստեղ երկիմաստություն լինել չի կարող»:

Հինգշաբթի
16 հունիսի 2022թ.
№ 11 (577)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԺԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ՀՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru



Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Ի՞նչ է կատարվում Ներքին Հանդի դիմացի բարձունքներում. հակասական տեղեկություններ

Ադրբեջանական ստորաբաժանումները կրկին առաջ են եկել ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Հանդ գյուղի դիմաց գտնվող լեռնային տեղանքում: Այս մասին հայտնում է «Սպուտնիկ Արմենիան»՝ հիշեցնելով, որ Ներքին Հանդ գյուղի շրջանում առաջ-խաղացման մասին 2022 թվականի մարտին ահազանգել էին տեղի բնակիչները:

Դրանից հետո ՀՀ ՊՆ-ն հաստատել էր,

որ Ադրբեջանի ՉՈՒ-ն դեռ 2021 թվականի գարնանն է ներխուժել գյուղի ուղղությամբ գտնվող տարածք: Ավելի ուշ նրանք եղանակային պայմանների պատճառով լքել են տարածքը եւ ձնհալից հետո վերադարձել:

Մինչեւ 2022 թվականի մարտ ամիսն այդ մասին պաշտոնական տեղեկություն չկար: Միաժամանակ հստակ է, որ Ադրբեջանի ՉՈՒ-ն այդ ուղղությամբ ճանապարհ է հարթել 2022

թվականի մարտ-ապրիլին, ինչը երեւում է արբանյակից արված լուսանկարներում:

«Սպուտնիկ Արմենիան» գրում է, որ թարմ կադրերում նկատվում է, որ արդեն իսկ հաստատված առաջխաղացումից բացի, ադրբեջանական սահմանապահ զորքն առաջ է եկել եւս երկու հատվածում՝ խորանալով Սյունիքի մարզի տարածք:

Շարունակությունը՝ էջ 2

Եթե կորցնենք Արցախը, ապա մենք կշրջենք հայոց պատմության վերջին էջը:

ՄՈՆԹԵ ՄԵԼԵՐՈՆՅԱՆ

Հայաստանում գնաճը կազմել է ինը տոկոս

Հայաստանում մայիս ամսվա դրությամբ գնաճը կազմել է ինը տոկոս, եթե որևէ նոր արտասովոր բան տեղի չունենա, ապա ԿԲ-ի գնահատմամբ՝ գնաճը տարվա վերջին ավելի ցածր կլինի: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին ասաց ԿԲ Նախագահ Մարտին Գալստյանն ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում՝ անդրադառնալով պատգամավորների հարցերին:

«Մենք մայիս ամսին Հայաստանում ունենք ինը տոկոս գնաճ, որը չափազանց բարձր թիվ է Հայաստանի տնտեսության և ընդհանուր մեր պատմական զարգացումները դիտարկելու առումով: Իհարկե, մեզ չըջապատող կամ գործընկեր երկրներում գնաճի ցուցանիշը շատ ավելի բարձր է, բայց Հայաստանում, բայց պետք է հասկանանք, որ ինը տոկոս գնաճը, սպառողական գների ինդեքսի ինը տոկոս աճը ենթադրում է, որ առաջին անհրաժեշտության ապրանքների գնաճը շատ ավելի բարձր է», – ասաց Գալստյանը:

Անդրադառնալով փոխարժեքի շուկայում նկատվող զարգացումներին՝ Նա ընդգծեց՝ ԿԲ-ն որևէ ազդեցություն չունի փոխարժեքի ձևավորման վրա: ԿԲ-ն ազդեցություն կարող էր ունենալ միայն այն դեպքում, երբ արտարժույթ վաճառք, սակայն տարվա ընթացքում արել է հակառակը՝ մոտ 100 մլն դոլարին համարժեք արտարժույթ է ձեռք բերել շուկայից: «Մենք ինտերվենցիաներ արել ենք միայն այն դեպքում, երբ շուկայում նկատել ենք որոշակի շուկայական մեխանիզմների խեղաթյուրումներ», – նշեց Գալստյանը:

Փոխարժեքը ձևավորվում է շուկայում ազատ առաջարկի և պահանջարկի հիման վրա: Գալստյանը վստահ է, որ, եթե ԿԲ-ն իր մանդատին դեմ գնա, շուկա մտնի ու դրամն արհեստականորեն արժեզրկի, ապա Հայաստանը կբախվի գնաճի ևս մեկ ալիքի հետ: Իսկ թե ինչ լուծում է պետք, ԿԲ Նախագահն ասում է՝ միջազգային լավագույն փորձը հուշում է, որ

Շարունակությունը՝ էջ 2

Արցախը չի կարող լինել Ադրբեջանի կազմում

■ ՀՀ ԳԱԱ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան իր մտահոգությունն է հայտնում վերջին շրջանում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության շուրջ ծավալվող իրադարձությունների առնչությամբ: Լինելով ապաքաղաքական կառույց, որի կանոնադրական խնդիրը գիտության զարգացումն է, ակադեմիան, սակայն, չի կարող անհաղորդ մնալ մեր պետության և ազգի համար գոյաբանական բաղաբաղական մարտահրավերներին: Այդպիսի մարտահրավեր է այսօր արցախահայության հնարավոր հայրենագրվման և ցեղասպանության վտանգը, որը կարմիր գիծ է մարդկության համար:

Հազարամյակների հայոց բաղաբաղականության մաս կազմող Արցախը մեր հայրենիքի անբաժան մասն է, արցախահայությունը

մեր ազգի ամենաերկար պետականություն պահպանած հատվածն է, մեր արևելյան պատվարը: Սակայն սկսած առնվազն 20-րդ դարի սկզբից՝ կոլկասյան թաթարները, թուրքական շրջանակների աջակցությամբ, այնուհետև նրանց ադրբեջանցի հետևորդները գործադրում էին բոլոր ջանքերը՝ վերացնելու հայկական որևէ հետք Արցախում: Այդ ամենն ուղեկցվում էր մարդկության դեմ իրագործվող հանցանքներով:

Այդ բաղաբաղականությունը շարունակվեց նաև Խորհրդային Միության փլուզումից հետո և առանձնահատուկ թափ ստացավ 2020թ. 44-օրյա պատերազմի արդյունքում ձևավորված նոր իրողությունների պայմաններում՝ պատանգի վերածվելով Ադրբեջանի Հանրապետության պաշտոնական գաղափարախոսության մի անբաժանելի բաղադրիչի: Այսօր



մենք ականատես ենք այս արատավոր բաղաբաղականության այնպիսի բացահայտ դրսևորումների, ինչպիսիք են հայտարարագրված ծրագրերն իսպառ վերացնելու հայկական

պատմամշակութային հետքն իր վերահսկողության տակ անցած նոր տարածքներում, հայատյացության սփռումը բոլոր հնարավոր

Շարունակությունը՝ էջ 2

Արցախը չի կարող լինել Ադրբեջանի կազմում

ՀՀ ԳԱԱ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 1

Միջազգային հարթակներում, պատմության գեղծարարությունը, արհամարհանքը միջազգային իրավունքի հանդեպ, մասնավորապես, ռազմագերիների հետ վարվելակերպի մասին ժնկի կոնվենցիայի ոտնահարումը և այլն:

Ադրբեջան պետության կազմում հայտնվելու պարագայում Արցախին սպասվում է արագ հայաթափում, արցախահայությանը՝ հայրենազրկում, ցեղասպանություն: Արցախը ոչ մի կարգավիճակով չի կարող մասը կազմել մի պետության, որն իր քաղաքացիներին արդեն մի քանի սերունդ դաստիարակում է մոլի հայատյացության մթնոլորտում: Հայաստանի Հանրապետությունն Արցախի ժողովրդի անվտանգության և ինքնորոշման իրավունքի իրացման երաշխավորն է: Մենք չենք կարող հրաժարվել այդ հիմնարար սկզբունքից:

Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը այսօր կանգնած են լուրջ մարտահրավերների առջև: Հարկավոր է համախմբել մեր ողջ ներուժը՝ դիմագրավելու այդ մարտահրավերներին, լուծումներ գտնելու առաջ ելած խնդիրներին: Գիտությունների ազգային ակադեմիան պատրաստ է ՀՀ պետական իշխանության մարմիններին տրամադրել մասնագիտական խորհրդատվություն, կարող է դառնալ այն հարթակներից մեկը, որտեղ կարող են քննարկվել համահայկական նշանակություն ունեցող հիմնահարցերը, լուծումներ և այլընտրանքային տարբերակներ առաջարկել համահայկական օրակարգի ձևավորման համար:

06.06.2022



Սիսիան և Գորայք համայնքների միավորումից կստեղծվի Սիսիան համայնք

Վարչատարածքային բարեփոխումների շարունակականությունն ապահովելու համար կառավարությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ, որով առաջարկվում է մի շարք մարզերում ձևավորել համայնքային փնջեր: Առաջարկվող ծրագրում ներգրավված է 13 համայնք, 141 բնակավայր, որոնց միավորման արդյունքում կձևավորվի 5 համայնք:

Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունել է կառավարության ներկայացրած նախագիծը, որի համաձայն փոփոխություններ է կատարվել «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքում:

Ըստ այդ փոփոխությունների՝ Սիսիան և Գորայք համայնքների միավորումից կստեղծվի Սիսիան համայնք՝ 36 բնակավայրով, 31.5 հազար բնակչությամբ:

ՀՀ գլխավոր դատախազն այցելել է Սյունիքի մարզ



Ինչպես «Արմենպրես»-ին հայտնում են դատախազությունից, Կապանում, մարզի դատախազությունում ՀՀ գլխավոր դատախազն անցկացրել է խորհրդակցություն, որին մասնակցել են ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, մարզի իրավապահ բոլոր կառույցների ղեկավարները, ինչպես նաև մարզի դատախազության և Գորիսի կայազորի զինվորական դատախազության դատախազները:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են Սյունիքի մարզի տարածքում 2022թ. ընթացքում հան-

ցավորության ընդհանուր միտումները, հանցագործությունների դեմ տարվող պայքարի, բրեյկան հետապնդման մարմինների ընդհանուր գործունեության ընթացիկ խնդիրներն ու արդյունքները:

Հատուկ անդրադարձ է կատարվել հետպատերազմյան շրջանում Սյունիքի մարզում անվտանգության, հակառակորդի հետ շփման գծում զինվորական ծառայության պայմանների, ինչպես նաև ճանապարհատրանսպորտային հաղորդակցության հետ կապված նոր մարտահրավերներին, հանցավորության ընդհանուր միտումների վրա դրանց հնարավոր ազդեցությունների չեզոքացմանը:

Հայաստանում գնաճը կազմել է ինը տոկոս

Սկիզբը՝ էջ 1

Նման իրավիճակներում շատ կարևոր է սեկտորային քաղաքականությունների իրականացումը: «Կան սեկտորներ, որոնք ստեղծված իրավիճակում տուժում են կամ որոշակիորեն մրցունակության անկում ունեն, այդ սեկտորներին պետք է տրվի օժանդակություն: Դա կարող է լինել կառավարության կողմից որոշակի քաղաքականության ներքո», – ասաց Նա՝ նշելով հավելյալ սուբսիդիաների, որոշակի հարկերի նվազման հնարավորության մասին:

Գալստյանը նկատեց՝ գնաճն իր հետ բերում է հավելյալ հարկային եկամուտներ, և ստեղծված հավելյալ եկամուտների վերաբաշխման միջոցով, միգուցե, պետք է արձագանքել ստեղծված խնդրին:

Անդրադառնալով հարցին, թե ինչու ստեղծված փոխարժեքի պարագայում, երբ դրամն արժևորվել է, գները չեն ճշգրտվում՝ ԿԲ Նախագահը պատասխանեց, որ երկու



գործոն կա: Այս փուլում, երբ փոխարժեքը արժևորվել է, ապրանքների միջազգա-

Այս համատեքստում Արթուր Դավթյանը շեշտել է, որ պետական շահերի պաշտպանության դատախազական գործառնությունը շրջանակում առաջնահերթություն է նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ սահմանային պաշտպանության և անվտանգության արդյունավետ կազմակերպման անհրաժեշտ պայմանների ապահովման պահանջների կատարման, ինչպես նաև մարզում պետական քուլջեի միջոցներով իրականացվող սոցիալ-տնտեսական, լոգիստիկ բազում ծրագրերի նպատակային և որակով իրականացման խնդիրները:

Քանի որ մարզի տարածքում շահագործվող միջհամայնքային և միջպետական նոր ճանապարհների առանձին հատվածներում, ինչպես օրինակ՝ Տաթև-Աղվանի գոտում, վերանորոգումից կարճ ժամանակ անց առաջացած քանդվածքները բարդություններ են ստեղծում տրանսպորտային երթևեկության համար, խնդիր է դրվել դատախազության պետական շահերի պաշտպանության գործառնությունը շրջանակում ուսումնասիրության առարկա դարձնել մարզում իրականացված ճանապարհաշինական ծրագրերի՝ սահմանված չափորոշիչներին և պահանջներին համապատասխանությունը:

Գլխավոր դատախազը խորհրդակցության ժամանակ ինչպես Սյունիքի մարզի դատախազությանը, այնպես էլ Գորիսի կայազորի զինվորական դատախազությանը տվել է նախանշված այս առաջնահերթություններից բխող կոնկրետ հանձնարարություններ:

Քննարկվել են նաև միջնադարյան վարչություն գտնվող գործերով քննությունների, իրավապահ մարմինների միջև համագործակցության արդյունավետության բարձրացմանը վերաբերող հարցեր:

07.06.2022

յին գները կտրուկ բարձրացել են, օրինակ, պայմանավորված ռուս-ուկրաինական պատերազմով, ցորենը գտնվում է պատմական մաքսիմումի վրա: Առաջին անհրաժեշտության ապրանքների համար կա միջազգային գների շատ մեծ աճ: Երկրորդ խնդիրն այն է, որ արտահանողները տրանսպորտային խնդիրներ են ունենում: «Իրենց համար փոխարժեքը չէ առաջնային խնդիրը, այլ Լարսի տարողունակության կամ տրանսպորտային ծախսերի ընդհանուր ավելացման խնդիրը», – ասաց Գալստյանը:

Գալստյանի գնահատմամբ՝ աշխարհաքաղաքական իրադարձությունները բերում են այն մտքին, որ մոտակա ամիսներին դեռևս գնաճային միջավայրը շարունակվելու է: «Բայց մեր կանխատեսումների համաձայն՝ այս պահին եղած ինը տոկոս գնաճը, միգուցե, մոտակա մի քանի ամսվա ընթացքում կարող է ևս որոշակի բարձրացման միտումներ ցուցաբերել, բայց, եթե որևէ նոր արտատվող բան տեղի չունենա, տարվա վերջին այս պահի դրությամբ ունեցած գնաճից ավելի ցածր գնաճ կունենանք», – ասաց Նա:

##

Ի՞նչ է կատարվում Ներքին Հանդի դիմացի բարձունքներում. հակասական տեղեկություններ

Սկիզբը՝ էջ 1

Մի դեպքում ճանապարհաշինարարական ակտիվ աշխատանքներ են կատարվել ապրիլի 20-ից հետո, մյուս դեպքում՝ ենթադրաբար մայիսին:

Ներքին Հանդ գյուղի բնակիչները «Սպյուտնիկ Արմենիայի» հետ գրուցում ասել են, որ տեղյակ չեն առաջխաղացման մասին: Դա զարմանալի չէ՝ հաշվի առնելով լեռնային տեղանքը:

Թեմայի առնչությամբ Ներքին Հանդի վարչական ղեկավար Խաչիկ Բաղդասարյանը «Փաստինֆո»-ին հայտնել է, որ գյուղից մոտ 1,5 կմ հեռավորության վրա գտնվող բլրին մեկ դիրք է ավելացել, բայց թե ովքեր են այնտեղ տեղակայված, դեռ հայտնի չէ:

«Չանգել եմ մեր համազրույցիցներից մեկին, որ պայմանագրային զինծառայող է, որպեսզի ճշտեմ՝ ադրբեջանցիներն են նոր դիրք դրել, թե մերոնք, ասաց, որ ինքն էլ դեռ չգիտի: Դա բարձր մակարդակներում կիմանան, երբեք: Համենայնդեպ, գյուղից դեպի Կոլսական ընկած հատվածում՝ բլրի վրա, մի դիրք ավելացել է: Հիմա մնում է ճշտել, թե ում դիրք է», – ասել է Խաչիկ Բաղդասարյանը:


Պաշտպանության նախարարությունը դրանից հետո հաղորդագրություն է տարածել, որում հերքել է լրատվամիջոցներում եւ սոցիալական ցանցերում տարածվող տեղեկությունը, թե «ադրբեջանական ստորաբաժանումները կրկին առաջ են եկել ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Հանդ գյուղի դիմաց գտնվող

լեռնային տեղանքում»:

Ինչպես արդեն ներկայացվել է ս.թ. մարտի 21-ին ՀՀ ՊՆ կողմից տարածված պարզաբանման մեջ, սահմանի նշված հատվածում ադրբեջանական ստորաբաժանումների տեղակայումն արձանագրվել է 2020թ. Նոյեմբերի 9-ից հետո, հետպատերազմյան շրջանում:

Ընդ որում, տեղակայման փաստն արձանագրելուց անմիջապես հետո ՀՀ ՇՈՒ կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր՝ ադրբեջանական դիրքերը վերահսկողության տակ վերցնելու ուղղությամբ, ինչի արդյունքում նշված տարածքում ադրբեջանական զինծառայողների շարժը լիարժեք վերահսկելի է, իսկ առաջխաղացման որեւէ փորձ կհանգեցնի պատասխան գործողությունների:

##



Թե ինչպես էր երեք դար առաջ՝ գրեթե նույն այս իրավիճակում մտածում Մխիթար Սպարապետը

Երկիրը միայն մշտական գործով է կանգուն՝ մեծաթիվ ու կանոնավոր:

Եթե թուրքերը գրավեն Սյունիքն ու Արցախը, տապանաբար կդնեն Յայրոց աշխարհի վրա:

Իսկ դուք ասում եք բանակցել, բանակցելու մեջ է փրկությունը, հարկավոր է օսմանցիներին որոշ բան զիջել...

Չիջել: Եղ ի՞նչ ես զիջելու: Հո՞ղո, սարե՞րո, թե՞ մեր ազատությունը...



Պրոֆեսոր Լեռնիկ Պետրոսյանը և Գորիսի համալսարանը կես տարի ղեկավարած Թեհմինա Մարությանը ռեկտորի ընտրությունից առաջ ինքնաբացարկ ներկայացրին. ինչու՞



Համալսարանի ռեկտոր ընտրված Տիգրան Վանդունցը



Լեռնիկ Պետրոսյան



Թեհմինա Մարության

Սայիսի 30-ին Գորիսի պետական համալսարանում ռեկտորի ընտրություն էր...

Համալսարանի ռեկտոր ընտրվեց Տիգրան Վանդունցը, ով տեխնիկական գիտությունների թեկնածու է, դոցենտ և ժամանակին դասախոսում էր Գորիսի պետական համալսարանում, իսկ վերջին շրջանում (տնօրենի պաշտոնակատարի կարգավիճակով) գլխա-

վորում էր Ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղը:

Քվեարկությունից առաջ, սակայն, տեղի ունեցան զարգացումներ, որոնք, անշուշտ, ուշադրության արժանի են: Խոսքը ռեկտորի պաշտոնին հավակնող Թեհմինա Մարությանի և Լեռնիկ Պետրոսյանի առեղծվածային ինքնաբացարկի մասին է: Ընդ որում՝ նրանցից և ոչ մեկը դեռևս չի պարզաբանել, թե ին-

Կյանքից հեռացել է ԵՊՀ Նախկին ռեկտոր Արամ Սիմոնյանը

Արամ Սիմոնյանը ծնվել է 1955 թվականի ապրիլի 12-ին Գորիսում: 1961-1972 թվականներին Սիմոնյանը սովորել է Գորիսի միջնակարգ դպրոցում: 1972-1977 թվականներին ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: 1977-1981 թվականներին ավարտել է Մոսկվայի ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան: 1983 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: 2000-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2005 թվականին ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

Սիմոնյանը հեղինակ է 85 գիտական աշխատանքների, որոնցից 4-ը մենագրություններ են: Գիտական հետազոտությունները վերաբերում են հայ ժողովրդի 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի պատմության հիմնահարցերին՝ մասնավորապես պատմական վիճակագրությանը, արդյունաբերական կապիտալի, ինչպես նաև Արցախի և Չանգեզուրի 1917-1921 թթ. պատմության խնդիրներին: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 10 թեկնածուական ատենախոսություն: Մասնակցել է բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովների: Բազմիցս իրավիճակ է Խալիլայի, Բեյգիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իսպանիայի, ԱՄՆ-ի և աշխարհի մի շարք այլ երկրների գիտակրթական կենտրոններ, որտեղ զբաղվել է գիտակրթական գործունեությամբ:

1981-1983 թվականներին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, այնուհետև՝ գիտաշխատող: 1986-2000 թվականներին հանդիսացել է ԵՊՀ ԽՍՀՄ պատմության ամբիոնի ասիստենտ, այնուհետև՝ Յայրոց պատմության ամբիոնի դոցենտ: 1993-1995 թթ. եղել է ԵՊՀ գիտաբարոյաբան, իսկ 1995-2000 թթ.՝ ԵՊՀ ուսումնական վարչության պետ: 2000-ին դարձել է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, իսկ 2006-ի մայիսին ընտրվել, 2011-ի մայիսին վերընտրվել ԵՊՀ ռեկտորի պաշտոնում: 2008-ի հուլիսի 10-ից ԵՊՀ Յայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրենն էր: 2015-ի հունիսի 25-ին ընտրվել է ԵՊՀ հիմնադրամի ռեկտորի պաշտոնում:

ԵՊՀ Նախկին ռեկտոր Արամ Սիմոնյանի պաշտպանները հայտարարություն են տարածել, որում նշվում է. «Կյանքից հեռացել է ԵՊՀ Նախկին ռեկտոր, գիտության վաստա-



կավոր գործիչ Արամ Հրաչիկի Սիմոնյանը: Նրա նկատմամբ 2018 թվականից սկսված խայտառակ ապօրինի հետապնդումներ նախաձեռնած անձինք կարող են իրենց բավարարված զգալ:

Արամ Սիմոնյանի հետ պատիվ ենք ունեցել ծանոթանալ 2018 թվականից հետո, ցավոք, սակայն, այնպիսի հանգամանքներում, որոնք չպետք է առնչվեին ունենալին նրա կարգի մարդուն: Քրեական գործ, մեղադրանք, խափանման միջոց հասկացություններն ու Արամ Սիմոնյանի անձը պարզապես անհամատեղելի էին: Անհնար էր նրա հետ անգամ քննարկել իրեն առաջադրված մեղադրանքը, ամոթ էր պարզապես: Համապատասխան արժեքներով ապրող ու դրանց հավատացող մարդ լինելով, Արամ Սիմոնյանն այդպես էլ իրաժարվեց հասկանալ, որ մարդուն կարելի է հանկիրավի մեղադրել, կարելի է պատվերով քննություն նախաձեռնել, պարզել, որ քննելու որևէ բան անգամ գոյություն չունի, բայց շարունակել հետապնդումները:

Ցանկանում ենք տեղեկացնել հանրությանը, որ Արամ Սիմոնյանի հարազատները չեն համաձայնվելու նրա մահվան հիմքով քրեական հետապնդման դադարեցմանը, պայքարը շարունակվելու է մինչև վերջ, մինչև Արամ Սիմոնյանի անմեղությունը հաստատող ակտի կայացում:

Արամ Սիմոնյանի պաշտպաններ՝ Լուսինե Սահակյան, Երվանդ Վարդյան», - նշվում է հայտարարության մեջ: //

չով էր պայմանավորված նման քայլը:

Թեհմինա Մարությանը գրականագիտության ոլորտում ճանաչված դեմք է մեր օրերում և մոտ կես տարի գլխավորել է Գորիսի պետական համալսարանը:

Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեռնիկ Պետրոսյանը կրթության ոլորտի (այդ թվում՝ բուհական) փորձառու և ճանաչված մասնագետ է, մի քանի դասագրքի և ուսումնամեթոդական աշխատանքի հեղինակ:

Եվ դժվար է պատկերացնել, որ նրանք Գորիսի պետական համալսարանի ռեկտորի թեկնածու են առաջադրվել միայն առաջադրվելու համար:

Ու ողջամիտ հարց է առաջացել՝ ի՞նչ է տեղի ունեցել քվեարկությունից ժամեր առաջ, որ Թեհմինա Մարությանն ու Լեռնիկ Պետրոսյանը հրաժարվել են իրենց որոշումից:

Հրաժարականից հետո մրցույթը տեղի է ունեցել Տիգրան Վանդունցի և ԳՊՀ ամբիոնի վարիչ Հրայր Պետրոսյանի միջև:

Գորիսի պետական համալսարանի կառավարման խորհրդում, սակայն, ռեկտորի ընտրության հարցը չէր միայն օրակարգում:

Կառավարման խորհուրդն այսուհետ կզլխավորի Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, ով օրեր առաջ էր ընդգրկվել խորհրդի կազմում: Մինչ այդ խորհուրդը ղեկավարում էր ԳՊՀ Նախկին ռեկտոր Արտուշ Ղուկասյանը, ով այդ պարտականությունը ստանձնել էր ռեկտորի պաշտոնը 2021-ի դեկտեմբերի 20-ին թողնելուց հետո (լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ):

”

”



Նշվեց Ակսել Բակունցի ծննդյան 123-ամյակը

Իմաստախոսությունն ասում է՝ «Միլիոնավոր մարդկանցից, որ ժողովուրդ են կազմում, ծնվում է միայն մի հանճար, ապարդյուն անցնող միլիոնավոր ժամերից միայն մեկն է դառնում իրոք պատմական: Եվ դա մարդկության աստեղային ժամն է»: Հայ ժողովրդի համար այդ աստեղային պահերից մեկն է 1899 թվականի հունիսի 13-ն էր՝ հայ արձակի բյուրեղային վարպետներից մեկի՝ Ակսել Բակունցի ծննդյան տեսլաժամը:

Գորիսում մեծ շուքով նշվեց մեծանուն արձակագրի ծննդյան 123-ամյակը: Միջոցառումները մեկնարկեցին Բակունցի հուշարձանի մոտ ծաղկեղեման արարողությամբ, ապա շարունակվեցին գրողի տուն-թանգարանում:

Բակունցի լուսաճառագ հարկի տակ հավաքված պաշտոնատար անձինք՝ Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի գլխավորությամբ, մտավորական ընտրանու ներկայացուցիչները, մայրաքաղաքից ժամանած հյուրերը, որոնց թվում մայր թանգարանի տնօրեն Վահագն Սարգսյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Էդուարդ Միլիտոնյանը, Արցախի գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը, գրականագետ, բ.գ.դ., պրոֆեսոր Դ.Գասպարյանը և ուրիշներ, իրենց ելույթներում շեշտեցին Բակունցի ստեղծագործության պատմական նշանակությունը, կարևորեցին բոլոր այն ձեռնարկները, որոնք միտված են նրա գրական հեղինակության ամրապնդմանը, ստեղծագործության հանրայնացմանը և սերունդներին Բակունցի իմաստուն ու լուսավոր մտքի ճանապարհով ուղղորդելու առաքելությանը:

Օրվա առթիվ Բակունցի տուն-թանգարանը Գորիս համայնքի, նաև մյուս համայնքների մշակութային, կրթական ու ստեղծագործական կառույցների համատեղ ուժերով բակունցատերերին ներկայացավ միջոցառումների հարուստ ծրագրով: Այցելուները անգնահատելի հնարավորություն ունեցան հաղորդակցվելու Բակունցի՝ «Այլուրի նման սրբազնագույն» աշխարհին, ներշնչվելու նրա

հոգևոր ներկայությամբ:

Օրվա առթիվ թանգարանում բացվեց նոր, բացառիկ ցուցադրություն՝ «Հովհաննես Թումանյանի ծննդավայրը Ակսել Բակունցի լուսանկարներում» խորագրով: Առաջին անգամ ցուցադրվեցին 1932 թ. Բակունցի կողմից Ղսեղում արված և մայր թանգարանի Թումանյանի ֆոնդում պահվող արխիվային լուսանկարները՝ հեղինակի ձեռագիր նշումներով: Ցուցադրությունը ներկայացրեց նախաձեռնության հեղինակ, բ.գ.թ., դոցենտ Թեմիմա Մարությանը: «Այս լուսանկարները թանգարանում ցուցադրվող լուսանկարչական սարքով գրողի կողմից արված բացառիկ գտածոներ են: 1932 թվականին Բակունցը Հովհաննես Թումանյանի դստեր՝ Նվարդի հետ այցելել է Ղսեղ և լուսանկարել իր սիրելի բանաստեղծի ծննդավայրը», - նշեց Մարությանը և հավելեց, որ Բակունցի ծննդյան օրվա առթիվ ցուցադրության են նախապատրաստվել այդ լուսանկարներից միայն 9-ը, որովհետև հստակ գրառումներ ու թվագրումներ ունեն, իսկ մյուս 10-ը հեղինակային հստակեցման, լրացուցիչ ճշգրտման կարիք ունեն, որից հետո հնարավոր կլինի ամբողջացնել հավաքածուն և ցուցադրել ամբողջությամբ:

Հ. Իգիթյանի անվան գեղագիտության կենտրոնի Գորիսի մասնաճյուղի տնօրեն, գեղանկարիչ Արամ Մաշուրյանի ջանքերով Բակունցի հարկի ներքո կյանքի կոչվեց ևս մեկ կարևոր իրադարձություն: Գորիսը գեղանկարիչների մի փայլուն համաստեղություն է տվել, որոնց շարքում առանձնանում է ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Գուրոսը և նրա ոչ պակաս տաղանդավոր որդին՝ Գևորգ Պարոնյանը: Տևական ժամանակ անց նրա ժառանգների պատրաստակամության արդյունքում թանգարանում բացվեց Գևորգ Պարոնյանի ցուցահանդեսը:

Օրվա խճանկարին վառ գույներ հաղորդեցին Տաթևի վանական համալիրի «Տաթևի գանգակներ» երգչախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Լուսինե Սարգսյան), Գորիսի «Լիլի Նարինյան» պարային համույթը (գեղ. ղեկավար՝ Լիլի Նարինյան), «Վահե Մելքումյան» երգի ու պարի դպրոցի վոկալ խումբը



(գեղ. ղեկավար՝ Վահե Մելքումյան), Խնձորեսկի Ա.Սաթունցի անվան երաժշտական դպրոցի երգչախումբը (գեղ. ղեկավար՝ Սոնա Մանվելյան):

Հյուրերը գրողի ստեղծագործությունների բույր ու իմպրեսիոն մեկ անգամ ևս վայելեցին Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի աշակերտների շնորհիվ, որոնք հանդես եկան Բակունցի գրական դիմանկարն ամբողջացնող գեղարվեստական կոմպոզիցիայի մատուցմամբ (ուսուցչուհի՝ Գոհար Մկրտչյան):

«Ակախական մանուշակ» երգի կատարմամբ Բակունցյան օրվան ծաղկաբույր լիցքեր հաղորդեց գորիսցի ճանաչված երգիչ Արկադիա Մարդանյանը:

Միջոցառումների շարքը ամփոփվեց մի գեղեցիկ իրադարձությամբ: Գեղանկարիչ Սևադա Գրիգորյանը իր վրձնած «Ակսել Բակունցի դիմանկարը» նվիրեց գրողի տուն-թանգարանին:

Միջոցառումը գեղեցիկ բեմագրով վարեցին Գորիսի պետական համալսարանի շնորհաշատ ուսանողները՝ ՌԻՆ Նախագահ Գուրգեն Հարությունյանը և Մելանյա Թևոնյանը:



Երեկ, այսօր, վաղը և հավիտյան հավիտենից Դու մեզ հետ ես, մեր աչքերի մեջ ու մեր հայացքի առջև, քո տանն ես՝ իբրև հավերժական տանտեր և դարձյալ մեզ հետ գեղարվեստական խոսքի քո՝ եղանակն է, քո խոսքի հազարը: Եվ այս փոթորկահույզ օրերին քո ոգու նշանի ներքո չկա՝ նահանջ, չկա՝ պարտություն, որովհետև դու քո «հերոսական կենսուղին» անցար առանց ետ շրջվելու, քո ցեղի նահատակաց ու ողբերին քո գիրկն առած, նրանց խիստ ու լացը քո սրտի խորքերում պահած...

Դու քո կենդանի տաճարը կառուցեցիր գրիվ և հավերժության համար, և որտեղ ոգեղեն հացը իրավամբ բաշխվում է ձրի, ձրի, բանգի դրա համար դու հատուցել էիր կանխավ և հատուցել էիր կյանքով: Եվ սրբազան է հար տառապանքով ծնված ճշմարտությունը քո՝ դարեդար և սերնդեսերունդ. «Աշխարհքս միշտ կմնա, ասա մարդը սևերես չմնա...»:

Ծնունդը շնորհավոր, մեծ գորիսցի...

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ



Կապանում Իրանի
հյուպատոսությունը
տարբեր ոլորտներում նոր
համագործակցությունների
հնարավորություն կստեղծի

Սյունիքի մարզի Կապան քաղաքում Իրանի հյուպատոսությունն ունենալու մասին իրանական և հայկական կողմերի միջև պետական մակարդակով համաձայնություն կա: «Արմենպրես»-ի հարցին ի պատասխան այս մասին ասաց Հայաստանում Իրանի դեսպան Աբբաս Բադախշան Չոհուրին: «Մշխատանքները սկսվել են, բայց դեռ համապատասխան տարածքը ձեռք չենք բերել: Դա ապացուցում է այս մարզի կարևորությունը Իրանի և Հայաստանի համար», – հավելեց նա:

Չոհուրիի խոսքով՝ դա շատ լավ հնարավորություն կստեղծի Հայաստանի սահմանակից մարզերի և Իրանի սահմանակից նահանգների՝ Թավրիզի, Արևմտյան Ատրպատականի հետ համագործակցության առումով, առևտրաշրջանառությունը կարող է նոր թափ և նոր իմաստ ստանալ:

«Տարբեր ուղղություններով համագործակցություններ են նախատեսում սահմանակից նահանգների և մարզերի միջև՝ գիտական, համալսարանական, տնտեսական և այլ ոլորտներում, նաև զբոսաշրջության ոլորտում շատ լավ նախագծեր են մշակում, որը մոտ ապագայում Սյունիքում տեղի կունենա, և դա կարող է օգնել երկու երկրների ժողովուրդներին միմյանց հետ ավելի լավ ծանոթանալու գործում», – ասաց նա:

27.05.2022

Սամվել Լալայան. «Հարժիսի տարածքում գտնվող պետֆոնդի հողերի վարձակալության համար մրցույթ կհայտարարվի հուլիսի կեսին»

Հարժիս գյուղի մերձակայքում՝ համայնքի վարչական տարածքից դուրս, 300 և ավելի հեկտար վարելահող կա, որի վարձակալության համար տարիներ շարունակ գյուղի բնակիչներն օրինաչափ ու արդարացի հավակնություն են ունեցել և ունեն: Առաջիկայում լրանում է այդ հողերի վարձակալության գործող պայմանագրերի ժամկետը, ասել է թե՛ մոտակա բերքահավաքից հետո ներկայիս վարձակալները տվյալ հողատարածքները մշակելու իրավունք չեն ունենալու այլևս: Հարժիսում սպասում են վարձակալության նոր շրջափուլի համար հայտարարվելիք մրցույթին:

«Սյունյաց երկրի» լրագրողի հետ զրույցում Տաթև Կամայանի ղեկավար Սամվել Լալայանը հավաստիացրեց. «Հարժիսի տարածքում գտնվող պետֆոնդի հողերի վարձակալության համար մրցույթ կհայտարարվի հուլիսի կեսին»:

Գյուղացիներին հետաքրքրում է նաև անցկացվելիք մրցույթի օրինակնությունն ու արդարացիությունը: Վերջին անգամ, օրինակ, Սյունիքի վայ-մարզպետի ուղղակի կարգադրությամբ արգելվել էր վարելահողերը (անկախ մրցույթի արդյունքներից) վարձակալության տալ Հարժիսի այն ընտանիքներին, որոնք իրեն լուրջ չէին ընդունում:

Միևնույն ժամանակ՝ նույնի կարգադ-



րությամբ՝ միատեսակ կատեգորիայի վարելահողերի համար սահմանվել էին տարեկան վարձակալության տարբեր սակագներ՝ «նվիրյալների» դեպքում՝ երեք հազար դրամ, սովորական կամ չեզոք հավակնորդների համար՝ քսան հազար դրամ:

Վայ-մարզպետը մի ուրիշ դպար էլ էր արել՝ հանձնարարել էր հնարավորության սահմաններում այդ վարելահողերը տրամադրել ոչ հարժիսցիներին, այլ մերձակա գյուղերից իր սպասավորներին՝ ընտրությունների ժամանակ իրեն ծառայածներին: Արդյունքում հարժիսցիները զրկվել են այն վարելահողերի զգալի մասը մշակելու հնարավորությունից, որ դարձրել էր նրանց

դեսերունդ, օգտագործել են:

Նման հանգամանքներն են պատճառ դարձել գյուղաբնակների ներկայիս մտահոգությունների համար, իսկ հարցերը շատ հստակ են՝ արդյո՞ք գյուղի պապենական հողերն իրենց կվերադարձվի, թե՞ նորից կբաժանվի մարդկանց քաղաքական կողմնորոշումներին համահունչ՝ անկախ մրցույթի արդյունքներից: Արդյո՞ք նորից խտրական վերաբերմունք կդրսևորվի վարձակալության գնները սահմանելիս:

Համայնքի ղեկավար Սամվել Լալայանի այդ առիթով Նույնպես դիրքորոշում հայտնեց՝ «Սյունիքի մարզպետարանի հետ ամեն ինչ անելու ենք, որ մրցույթն անցնի գործող օրենքի սահմաններում»:

Դե ինչ, գնահատելի է Սամվել Լալայանի դիրքորոշումը, մնացյալը ժամանակը ցույց կտա...

Ի դեպ, Հարժիսում այսպիսի առաջարկություն է շրջանառվում՝ պետֆոնդի վարելահողերը հավասարապես վարձակալության տալ գյուղի բոլոր ընտանիքներին, ընդ որում՝ հավասար պայմաններով: Եվ դրանով ինչո՞րը կհամարվի լուծված: Մյուս պահանջը, որ գյուղաբնակները շատ կտրուկ են դնում և պատրաստ են հետամուտ լինել մինչև վերջ, հետևյալն է՝ հարյուրամյակներ շարունակ գյուղին պատկանող վարելահողերը ոչ մի պարագայում չպետք է տրամադրվեն ոչ հարժիսաբնակներին, այլսպես դա կդիտվի որպես գյուղը քայքայելու, գյուղից արտագաղթը խրախուսելու անբարո քայլ...

Կարծում ենք՝ և՛ Սյունիքի մարզպետարանը, և՛ Տաթևի համայնքային իշխանությունը (Հարժիս գյուղը մտնում է տվյալ համայնքի մեջ) հաշվի կնստեն գյուղի բնակչության ողջամիտ դիրքորոշման հետ...

27.05.2022

Հայաստանում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Կոպիրկինն այցելել է Սյունիքի մարզ

ՌԴ դեսպանատան մամուլի ծառայությունից «Արմենպրես»-ին տեղեկացրին, որ դեսպան Կոպիրկինը Հայաստանում ՌԴ անվտանգության դաշնային ծառայության սահմանապահի վարչության ղեկավարության ուղեկցությամբ հարգանքի տուրք է մատուցել 2020 թվականին Երասխ բնակավայրի մոտ՝ մարտական առաջարկում կատարելիս զոհված Մի-24 ուղղաթիռի անձնակազմի անդամների հիշատակին:

Դեսպանն այցելել է նաև Հայաստանի սահմանի «Պարույր Սևակ» և «Տեղ» սահմանակետեր, հանդիպել ռուս սահմանապահների հետ, ծանոթացել նրանց առօրյա և մարտական պատրաստության աշխատանքների առանձնահատկություններին:

Սյունիքի Կապան քաղաքում Կոպիրկինին դիմավորել են համայնքապետարանի ներկայացուցիչները, ովքեր քաղաքի բնակչության անուկից շնորհակալություն են հայտնել Ռուսաստանին սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանն աջակցելու, ինչպես նաև տարածաշրջանում անվտանգության ապահովման գործում սահմանապահների մասնակցության համար:

Դեսպանն այցելել է նաև Կապանի օդանավակայանի մոտ տեղակայված ռուս սահմանապահների հենակետ: Մեղրու սահմանապահ ջոկատի պետ, գնդապետ Ա. Վ. Բուրչոնինը դիվանագիտական առաքելության ղեկավարին ներկայացրել է Հայաստանի սահմանի այս հատվածում զարգացող օպերատիվ իրավիճակի առանձնահատկությունները:

Մայիսի 25-ին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Դուկասյանը հանդիպել է Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին:

Հանդիպմանը մասնակցել են նաեւ Կապանի համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը, ռուսական սահմանապահ ծառայության հրամանատարության, ՀՀ-ում ՌԴ առևտրային ներկայացուցչության անդամներ:

Մարզպետը շնորհակալություն է հայտնել դեսպանին մարզ այցելելու համար, նաեւ



չեչտել հայ-ռուսական բարեկամության ու բոլոր ոլորտներում համագործակցության կարելությունը մարզի համար: Ռոբերտ Դուկասյանը նշել է նաեւ Սյունիքի խոշոր ձեռնարկություններում ռուսական կապիտալի ներկայության մասին, բայց հավելել, որ մարզի կյանքում ամենակարեւորը ռուս սահմանապահների դերակատարումն է բնակչության անվտանգության ապահովման հարցում:

Դեսպանը շնորհակալություն է հայտնել Սյունիքի մարզային ու համայնքային իշխանություններին՝ ռուս սահմանապահների հետ սերտ համագործակցության ու տարբեր հարցերում աջակցության համար:

Սերգեյ Կոպիրկինն ասել է, որ հայ եւ ռուս ժողովուրդները կապված են պատմությամբ, մշակույթով, ավանդույթներով, եւ այդ կապերն ավելի ու ավելի ամրապնդել է պետք. «Ինչ վերաբերում է Սյունիքին, մարդիկ այստեղ միայն լսելով չէ, որ գիտեն այդ կապերի մասին, նրանք ամեն օր տեսնում են դա»:

Բարձրաստիճան դիվանագետը ներկայացրել է նաեւ այն կրթական, մշակութային, երիտասարդական ծրագրերը, որ մարզում իրականացնում է դեսպանատունը:

Կապանի համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը եւս շնորհակալություն է հայտնել դեսպանին՝ համագործակցության համար ու նշել անվտանգային առումով ռուս սահմա-



նապահների ներկայության կարելությունը համայնքի համար:

Ներկաները քննարկել են տնտեսական, ներդրումային առավել ակտիվ համագործակցությանը, երկկողմ ուղղությամբ զբոսաշրջության զարգացմանը, ենթակառուցվածքներին վերաբերող եւ այլ հարցեր:

Հանդիպման ընթացքում ՌԴ առևտրային ներկայացուցիչ Աննա Դոնցենկոն,

առևտրատնտեսական հարաբերությունների մասին խոսելիս, հայտնել է, որ ռուսական կապիտալով ներդրումների ծավալով ՀՀ-ում Սյունիքը երեսնից հետո երկրորդն է ու նշել տնտեսական կապերի ակտիվացման հեռանկարների մասին: Նա նաեւ ասել է, որ ռուսական կողմը պատրաստակամ է զարգացնել երկրների միջև միջմարզային համագործակցությունը:

ՀՀ-ում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինը Սյունիքի մարզ կատարած այցի շրջանակներում մայիսի 25-ին հյուրընկալվել է Մեղրի համայնքում:

Դեսպանը հանդիպում է ունեցել Մեղրի համայնքի ղեկավար Բագրատ Չաբարյանի, ՌԴ սահմանապահ զորամասի իրամասնատար, գնդապետ Ա. Բուրչոնինի և «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի տնօրեն Ա. Սիսյակովի հետ:

Հանդիպման ընթացքում Բագրատ Չաբարյանը դեսպանին ծանոթացրել է համայնքում առկա խնդիրներին, ինչպես նաև ներկայացրել համայնքի զարգացման հնարավորություններն ու ուղիները:

Սերգեյ Կոպիրկինը նշել է, որ Մեղրին յուրահատուկ դիմագիծ ունի և այստեղ ինքը զբոսաշրջության ոլորտում հետագա համագործակցության նախադրյալներ է տեսնում:

Դեսպանն ու համայնքի ղեկավարն անդրադարձել են նաև այն կրթական, մշակութային ծրագրերին, որ իրականացնում է դեսպանատունը համայնքում: Բագրատ Չաբարյանը շնորհակալություն է հայտնել դեսպան Սերգեյ Կոպիրկինին՝ Մեղրի համայնք այցելելու և հայ-ռուսական բարեկամության համատեքստում մեր երկրին աջակցելու համար:

Բագրատ Չաբարյանն անդրադարձել է նաև անվտանգային առումով Մեղրի համայնքում ռուս սահմանապահների ներկայության կարևորության հարցին՝ շնորհակալություն հայտնելով սերտ համագործակցության ու տարբեր հարցերում նրանց կողմից ցուցաբերված աջակցության համար:

Ներկաները քննարկել են նաև առավել ակտիվ համագործակցություն, զբոսաշրջության զարգացմանը, ենթակառուցվածքների վերաբերող այլ հարցեր:

##



Յրաչյա Պողոսյան. հերոսանալու համար էր աշխարհ եկել...

Յրաչյա Վաչիկի Պողոսյան, ծնվել է 1995 թ. մարտի 19-ին Կոռնիձորում: 2002-2012 թթ. սովորել է Կոռնիձորի միջնակարգ դպրոցում: Եղբայր է խիզախ էր, պայքարող: Ուներ մեկ սկզբունք. կյանքում լինել մարդկային, բարոյական արժեքներ կրող, ապրել ազատության մեջ, մերժել ստրկական կյանքը, լինել նպատակալաց, կառուցողական գաղափարներ կրող:

2013-2015 թթ. զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության: Ծառայել է ՊԲ ՇՈՒ Դիվիզիոնի բաղադրի ՊԲ զորամասի գրահասայլային (տանկային) գումարտակում:

Ծառայության ընթացքում ցուցաբերելով բարձր կարգապահություն՝ արժանացել է շնորհակալագրերի, խրախուսանքների: Չորակոչվելուց հետո աշխատանքի է անցել ԱԱԾ սահմանապահ զորքերում:

2016 թ. մասնակցել է Արցախյան բառնորյա պատերազմին:

2020 թ. սեպտեմբերի 27-ին բռնկված արցախաարթրբեջանական պատերազմի ժամանակ մասնակցել է Արցախի Տրակա-նի (Ձաբախի) պաշտպանական մարտերին: Մահացու վիրավորում ստանալով՝ անմահացել է հոկտեմբերի 14-ին՝ իր հրամանատարի հետ, անօդաչու թռչող սարքից արձակված հրթիռի հարվածից՝ մարտական գործողության ժամանակ: Հուղարկավորված է Գորիսի զինվորական պանթեոնում:

2020 թ. սեպտեմբերի 27-ին հակառակորդի սանձազերծած լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում ԱՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության և խիզախության համար Յրաչյա Պողոսյանին շնորհվել է «Արիության համար» մեդալ:



Կապիտան Լևոն Բաղիկյան. մարտնչեց մինչև վերջին շունչը

Լևոն Սամվելի Բաղիկյան, ծնվել է 1993 թ. հունիսի 21-ին Երևանում: Հաճախել է Երևանի Ծովակալ Իսակովի անվան 132 դպրոցը:

Բարի էր, նրբանկատ, միևնույն ժամանակ՝ զինվորականի վճռականության և պատասխանատվության մարմնացում:

Կապիտան Լևոն Բաղիկյանը հայրենիքի հանդեպ սերն արտահայտեց դեռ մանկուց: Այդ էր պատճառը, որ 2008 թ. ընդունվել է ՀՀ պաշտպանության նախարարության Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան: 2010-2014 թթ. սովորել է ՀՀ պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի մոտոհրաձգային ստորաբաժանումների ղեկավարում բաժնում: Նրան շնորհվել

է ճարտարագետ բակալավրի աստիճան՝ բարձրագույն ռազմամասնագիտական կրթությամբ սպայի որակավորմամբ: Ավարտելով համալսարանը, ծառայության է անցել Սիսիանի N զորամասում, միշտ հպարտացել է, որ ինքն իր զինակից ընկերների հետ անահիլ է պահում Սյունիքի դարպասները:

Լևոն Բաղիկյանը 2019 թ. գործուղվել է ՌԴ Մարշալ Ժուկովի անվան ակադեմիա՝ լեռնային պատրաստության հետախույզի եռամսյա դասընթացների: Բարձր ցուցանիշներով ավարտելուց հետո՝ ՀՀ պաշտպանության նախարարության N զորամասում նշանակվել է հրաձգային վաշտի հրամանատար: Մեկ տարի եղել է դիպուկահարների հրամանատար:

2020 թ. ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով պարգևատրվել է «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալով: Ծառայության ընթացքում զորամասի հրամանատարի, 4-րդ ԲԿ հրամանատարի և ՀՀ պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել է պատվոգրերով:

Պատերազմի հենց առաջին օրերից եղել է ռազմական գործողությունների կիզակետում մասնակցել է Հաղորդի պաշտպանության թեժ մարտերին: Տոկատը չորս օր մնացել էր շրջափակման մեջ և կապիտան Բաղիկյանի շնորհիվ անվնաս դուրս էր եկել:

Չոհվել է հոկտեմբերի 14-ին՝ վիրավոր ընկերներին ռազմադաշտից դուրս բերելիս: ԴՆԹ անալիզը հաստատվել է հունվարի 23-ին, հուղարկավորվել է փետրվարի 28-ին Եռաբլուրում:

Յետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:



Հովհաննես Հովհաննիսյան. Դոկ մականունով կապանցի հետախույզը

Հովհաննես Սմբատի Հովհաննիսյան, ծնվել է 2000 թ. դեկտեմբերի 23-ին Կապանում: Սովորել է Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցում, ավարտելուց հետո 2018 թ. ընդունվել է Կապանի պետական բժշկական թուղթի «Դեղագործական գործ» բաժնի: 2015 թվականից սկսած եղել է Կապանի «Պատանի երկրապահ» խմբի անդամ: 2019 թ. հունվարի 13-ից պարտադիր ծառայության զինվորական ծառայության է անցել ՀՀ զինված ուժերում՝ Բերդ բաղադրում: Լինելով ֆիզիկապես ուժեղ՝ ծառայել է հետախույզության խմբում, իսկ վեց ամիս անց՝ ցուցադրելով իր բարձր մարտունակությունն ու զիտելիքները, ծառայությունը շարունակել է ՀՀ ՊՆ հատուկ նշանակության զորքերում: Չորամասի հրամանատարության կողմից արժանացել է գովասանքի ու կրծքանշանների՝ «Հայոց բանակի գերազանցիկ», «Լավագույն զինվոր-մարզիկ», «Քաջարի մարտիկ»: Ճանաչվել է 2019-2020 թթ. ուսումնական տարվա լավագույն զինվոր:

Հովհաննեսը եղբոր հետ օրվա զգալի մասն անց էր կացնում մարզահրապարակում: Խոստացել էր, որ ամեն ինչով կգերազանցի եղբորը. այդպես էլ եղավ՝ սկզբում ձգումներով գերազանցեց, հետո՝ վազքով: Սկսեց ավելի շատ գրքեր կարդալ, իսկ բանակից վերադառնալու պես՝ «հիրում» վարժությունով գերազանցեց: Ցավոք, երազանքներն այդպես էլ անկատար մնացին...

Յետախույզ Հովհաննես Հովհաննիսյանը պատերազմի ամենաթեժ կետերում էր հենց առաջին օրվանից: Եղել է Քարվաճառում,

Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց քաջորդիներին

այնուհետև՝ Տրակալում, Հաղորդում: Մարտական ընկերները Հովհաննեսին Դոկ էին անվանում, այսինքն՝ բժիշկ: Պատերազմի ընթացքում իր խմբի հետ միասին շրջափակումից դուրս են հանել շատ ու շատ մարդկանց՝ փրկելով 100-ից ավելի կյանքեր: Իր բժշկական գիտելիքների շնորհիվ փրկել է տասնյակ զինվորների կյանքեր՝ վիրակապելով նրանց ու մարտի դաշտից հանելով ավելի ապահով վայր: Սանասարում՝ թեժ մարտերի ժամանակ, հոկտեմբերի 20-ին նախահարձակման անցնելիս խոցվել է դիպուկահարի գնդակից:

Հոկտեմբերի 21-ից սկսած Հովհաննեսի հետ կապ հաստատելու բոլոր փորձերն անարդյունք էին:

Նոյեմբերի 5-ին լուր ստացան նրա մահվան մասին, բայց շարունակեցին որոնումներն աճյունի բացակայության պատճառով՝ հուսալով, որ ողջ է: Միայն հունվարի 28-ին, ԴՆԹ-ի անալիզի օգնությամբ, Հովհաննեսի դին գտան Գումրու դիակերճարանում:


Հովհաննես Հովհաննիսյանը հուղարկավորվել է փետրվարի 1-ին Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Յետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի և «Կապան» մեդալներով:



Մարտին Գալստյան. հայոց պատմության փառավոր էջերում գրվող անուն

Մարտին Վազգենի Գալստյան, ծնվել է 1991 թ. օգոստոսի 2-ին Բռնակոթ գյուղում: Կրթությունը տեղի դպրոցում ստանալուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզմաթ բաժնի: Ուսանելու տարիներին ֆակուլտետում պոեզիայի օր էր կազմակերպել, ընթերցել իր եւ մյուս ստեղծագործող ուսանողների բանաստեղծություններից: Այնուհետև զորակոչվել է բանակ: Հայրենիքի նկատմամբ պարտքը պատվով կատարելուց հետո շարունակել է ուսումը: Ավարտելուց հետո մեկնել է ՌԴ, բայց հայրենիքի կարոտից դրված, վերադարձել է: 2017 թ. ծառայության է անցել Սիսիանի N զորամասում՝ պայմանագրային զինծառայող՝ որտեղ պատվով է ծառայել ու մեծ նվիրումով: Որպես բարձրագույն կրթությամբ լավ զինվորականի, վերապատրաստման ուղարկեցին Լուսակերտ. այնտեղ Մարտինը ծամկետային



իր ծառայությունն էր անցել: Ու ավագ սերժանտի կոչումով վերադառնալով՝ ծառայությունը շարունակեց Սիսիանի զորամասում:

Չինվոր Մարտինն էապես տարբերվում էր ստեղծագործող Մարտինից. երբ զենքը վայր էր դնում, գրիչն էր վերցնում, ու հանկարծ հզոր մարտիկը դառնում էր ներհուն ու խորհող, տողերում պատկերում մի խորունկ աշխարհ, որտեղ ապրում էին Մարտինն ու իր մտքերը, իր երազանքները: Նրան միշտ թվում էր, թե ինքն ուշացել է, ուշացել ու հետ է ընկել... Նրա սիրտը սիրո կարոտ էր ու սիրառատ...

Երբ սկսվեց պատերազմը, Սիսիանի դիրքերում էին: Հոկտեմբերի 8-ին իջան դիրքերից, իսկ հոկտեմբերի 9-ին մեկնել է Արցախ՝ իր ջոկատով միացել Կարմիր շուկայի պաշտպանությանը:

Հոկտեմբերի 10-ին Կարմիր շուկայում ԱԹՍ-ը հարվածել էր ավտոշարայանը... Տոկատից փրկվել էին միայն երեք, իսկ Մարտին Գալստյանը զոհվել էր...

Ավագ սերժանտ Մարտին Գալստյանը հուղարկավորվել է Նոյեմբերի 6-ին Սիսիանի պանթեոնում: Յետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» և «Տիգրան Մեծ» մեդալներով:



Արտաշես Ազիզյան. զինվորի կոչումը նրա ճակատագրի վերջին դրոշմն էր

Արտաշես Եղիշեի Ազիզյան, ծնվել է 1980 թ. հուլիսի 7-ին Երևանում: Սովորել է մայրաքաղաքի թիվ 144 դպրոցում, ապա ընտանիքը տեղափոխվել է ՌԴ, որտեղ և Արտաշեսը շարունակել է ուսումը: 1991 թ. ընտանիքով վերադարձել են Հայաստան և բնակություն հաստատել Մեղրիի շրջանի Նոնաձոր գյուղում: Ուսումը շարունակել է տեղի միջնակարգ դպրոցում: 1998 թ. անցել է ծառայության հայոց բանակում, ծառայել է Վաչի ռազմական ոստիկանությունում՝ շարքային զինվոր: Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Արտաշեսը սիրում էր կյանքը, ապրում էր՝ իր հետ ապրեցնելով բոլորին: Շատ էր սիրում երեխաներին և յուրաքանչյուր ազատ վայրկյանն օգտագործում էր նրանց հետ շփվելու: Չափազանց ընկերասեր էր, ուներ մեծ ընկերական շրջանակ, հոգատար էր, համբերատար և՛ որպես ամուսին, և՛ որպես հայր:

2016 թ. աշխատել է Ազարակի զորամասում՝ պայմանագրային զինծառայող: 2022 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան պատրաստվում էր այգի գնալ, բայց զանգեցին ու շտապ կանչեցին աշխատանքի: Պատրաստվեց ու ոչինչ չասելով՝ դուրս եկավ...

Սկզբում եղել է Ազարակի դիրքերում, հոկտեմբերի 3-ին տեղափոխվել են Տրակալ (Ձաբախ): Չանգահարում էր տուն, երեխաներից հարցնում, խնդրում, որ զգույշ լինեն և չանհանգստանան: Վերջին զանգը եղել է հոկտեմբերի 8-ին: Հոկտեմբերի 10-ին հայտնի դարձավ նրա զոհվելու մասին: Արտաշեսի ծննդյան օրվանից երկու օր անց՝ հուլիսի 9-ին, ստացան ԴՆԹ-ի անալիզի պատասխանը: Արտաշես Ազիզյանը հուղարկավորվել է Եռաբլուր պանթեոնում: Յետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

ԷՏԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ ՄԱՐԻ ՆԱԿԱՍՏՈՐՅԱՆԸ



Հայ ժողովրդական երգարվեստի եւ պարարվեստի փառատոն՝ «Սյունիք - 2022»

Մայիսի 25-ին մարզկենտրոն Կապանում կայացավ «Սյունիք - 2022» հայ ժողովրդական երգարվեստի եւ պարարվեստի փառատոնը (Նախածեռնող՝ Սյունիքի մարզպետարան, աշխատանքների կազմակերպումը՝ մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի)։ Միջոցառման իրենց մասնակցությունն էին բերել ստեղծագործական խմբեր, երաժշտական համույթներ ու անհատ կատարողներ Կապանի, Մեղրու, Սիսիանի եւ Գորիսի տարածաշրջանների։ Միևեք երեկոյան դահլիճային կատարումները՝ փառատոնի մասնակից պարային

խմբերը Կապանի Գարեգին Նժդեհի հուշահամալիրում միասին «Սյունյաց քոչարի» պարեցին։ Փառատոնի Նպատակն էր պահպանել ու խրախուսել հայ ժողովրդական երգարվեստի ու պարարվեստի տարածումը, հայտնաբերել այդ ոլորտում մարզի շնորհալիներին, Նրանց համար ստեղծել միասնական հարթակ՝ միմյանց ճանաչելու, փորձի փոխանակման, համատեղ Նախածեռնություններով հանդես գալու համար։ Նպատակ կա Նաեւ այն զարգացնել ու դարձնել ամենամյա։

##



Նշվեց Մեղրիում տեղակայված ռուսական սահմանապահ զորամասի 67-ամյակը

Մեղրիում տեղակայված ռուսական սահմանապահ 2393 զորամասի 67-ամյակի առթիվ Մեղրի էին ժամանել բազմաթիվ բարձրաստիճան հյուրեր։ Մեղրիի համայնքի ղեկավար Բագրատ Չաբարյանը շնորհավորելով զորամասի հրամանատար-գնդապետ Ա. Բուրչոնին՝ շնորհակալություն հայտնեց ծառայողական պարտականությունները՝ ՀՀ պետական սահմանի պաշտպանությունը, գերազանց կատարելու համար։ Օրն ամփոփվեց զինվորական տոնական համերգով։ Մեղրիի ռուսական սահմանապահ ջոկատում կողք կողքի պատասխանատու ծառայություն են իրականացնում Ռուսաստանի

և Հայաստանի ժողովուրդների լավագույն ներկայացուցիչները։ Նրանք իրենց համատեղ ծառայությամբ բազմապատկում են ձևավորված բարեկամական, բարիդրացիական դարավոր ավանդույթները։ Չորամասի անձնակազմն իր կերտած պատմության ընթացքում դրսևորել է բացառիկ Նվիրվածություն և ազգաբնակչության անվտանգության ապահովման, պետական սահմանի հուսալի պաշտպանության համար պատասխանատվության խոր գիտակցում, ինչի համար երախտապարտ ենք։ Կրկին շնորհավորում ենք և մաղթում խաղաղություն ու բարօրություն։

ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



Երկու տարի բեմում

Երկու տարի առաջ մարզկենտրոնի պարային խմբերին ավելացավ ևս մեկը՝ «Չանգեզուր» պարային համույթը (հիմնադիր և գեղարվեստական ղեկավար՝ Վահագն Գասպարյան)։ Ամեն շաբաթ հաղթահարելով Երևան-Կապան և հակառակ հեռավորությունը՝ պարուսույցը կարողացավ ոչ միայն իր սաներին ուսուցանել պարի այբուբենը, այլև ստեղծել մի համերաշխ կոլեկտիվ, որը հանդես եկավ Նաև Երևանյան հեղինակավոր Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի բեմահարթակում։ «Չանգեզուրը» իր կատարումներով Նաև գույն ու հմայք հաղորդեց Կապանում անցկացվող տարատեսակ միջոցառումներին։ Հիմա եկել է քարերը ժողովելու ժամանակը։ Մայիսի 31-ին Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում կայացավ «Չանգեզուր» պարային համույթի «Երկու տարի բեմում» անդրանիկ համերգային ծրագիրը։ Հաշվետու համերգին մասնակցում էին Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, գրականագետ, դոկտոր-պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը։ Երեկոյն վարում էր ՀՀ վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանը։ Միջոցառմանը մասնակցում էին մայրաքաղաքի «Վալես» պարային համույթի անդամներ (պարուսույց՝ Վահագն Գասպարյան)։ Ելույթ ունեցավ մշակույթի կենտրոնի ժողգործիքների անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Վիգեն Հովհաննիսյան)։ Մեկուկես ժամ մշակույթի կենտրոնի բեմահարթակում խմբի կողմից ցուցադրվեցին հայկական ազգագրական և տարբեր ժողովուրդների պարեր։ Համերգային ծրագիրը եզրափակվեց «Չանգեզուր» խմբի տարբեր տարիքի պարողների ելույթով, որին միացավ



խմբի գեղարվեստական ղեկավարը՝ պարային կրակոտ վերջաբանով։ Շնորհավորանքի խոսքում «Չանգեզուր» համույթի երկու տարվա գործունեությունը, մանավանդ մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության գործում, արժևորեցին Դավիթ Գասպարյանը և Վիգեն Հովհաննիսյանը։ Վերջինս Նաև Կապանի մշակույթի կենտրոնի կողմից պատվոգիր հանձնեց Վահագն Գասպարյանին։ Նրան՝ խմբի անդամները և Նրանց ծնողները Խուստուկի պատկերով մի գեղանկար Նվիրեցին։ «Չանգեզուրի» անդրանիկ ելույթը գեղագիտական հաճույք պատճառեց կապանցի հանդիսատեսին, ով յուրաքանչյուր պարային կատարում վարձատրում էր ջերմ ծափող ջուլներով։

ՎԱՀԱՆ ՕՐԲԵԼՅԱՆ



Շինուհայրի երաժշտական դպրոցը Նշեց իր 35-ամյակը

Շինուհայրի երաժշտական դպրոցում հաշվետու համերգով ամփոփվեց ուսումնական տարին։ Այն համընկավ Նաև դպրոցի 35-ամյակի հետ, որն ավելի տոնական դարձրեց օրը։ Երաժշտական դպրոցի սաներն իրենց կատարումներով

հիացրին ներկաներին՝ արտացոլելով ուսուցիչների հմտություններն ու կարողությունները։ Իսկ միջոցառումը զուգորդվեց կոմիտասյան երաժշտությամբ։

ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



Հունիսի 9-ից 12-ը Մալթայում անցկացվել է Եվրոպայի փոքր երկրների առաջնություն, որտեղ Հայաստանի աթլետիկայի հավաքականը 2 ոսկե, 1 արծաթե և 1 բրոնզե մեդալ է նվաճել

Տղամարդկանց պայքարում ոսկե մեդալակիր է դարձել կապանցի հեռացատկորդ Գոռ Բեգլարյանը՝ գրանցելով լավագույն 7մ 59 սմ արդյունք։ Սրտանց շնորհավորում ենք Գոռ

Բեգլարյանին՝ տպավորիչ հաղթանակի կապակցությամբ և մաղթում Հայաստանի Հանրապետության դրոշմ կարծրորեն բարձրացնելու Նորանոր հնարավորություններ ու հաջողություններ։

##

Կապան համայնքի 2022 թ. միևնույն ֆուտբոլի չեմպիոն դարձավ «Բաղաբերդ» թիմը

Հունիսի 14-ին տեղի ունեցան Կապան համայնքի 2022թ. ֆուտբոլի (միևնույն ֆուտբոլի) եզրափակիչ խաղերը։ Թեժ ու լարված մրցապայքարնից հետո որոշվեցին առաջին երեք հորիզոնական զբաղեցրած թիմերը։ 3-րդ տեղը զբաղեցրեց «Հ. Ավետիսյան» թիմը, 2-րդ տեղը զբաղեցրեց «Ռ. Մինայան» թիմը։ Այս տարվա չեմպիոն դարձավ «Բաղաբերդ» թիմը։

Լավագույն ֆուտբոլիստ ճանաչվեց Տիգրան Իվանյանը «Բաղաբերդ» թիմից։ Լավագույն դարպասապահ՝ Էրիկ Հարությունյանը՝

կրկին «Բաղաբերդ» թիմից։

Կապան համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհուրդը շնորհակալություն է հայտնում բոլոր մասնակիցներին, Կապանի Դ. Համբարձումյանի անվան մարզադպրոցի աշխատակազմին՝ ի դեմս տնօրեն Միքայել Եգանյանի, Հայաստանի ՀՀՖ Սյունիքի մարզի ներկայացուցիչ Արմեն Տախինյանին, և, իհարկե, Կապանի համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանին՝ մրցաշարը հովանավորելու համար։

##

Մոսկվայում կայացավ գեղարվեստական մարմնամարզության «Грация Baby CUP» միջազգային բաց առաջնությունը

Հունիսի 3-5-ը անցկացված բաց առաջնությանը մասնակցեցին 320 մարզուհիներ։ Հայաստանից մասնակցեցին Քաջարանի համալիր ՄՊՄԴ-ի գեղարվեստական մարմնամարզության երեք մարզուհի, որոնք տուն վերադարձան երկու ոսկե և մեկ արծաթե մեդալներով։

Էդիտա Սաղաթյան՝ 1-ին տեղ, Անի Պետրոսյան՝ 1-րդ տեղ, Մարիա Նազարյան՝ 2-րդ տեղ։ Հատուկ մրցանակ։ Մրցաշարի գավաթով պարգևատրվեց Մարիա Նազարյանը։



Շնորհակալություն ենք հայտնում «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի վարչական ղեկավարամենտի ղեկավարությանը մրցաշարը հովանավորելու համար։

08.06.2022



Լևոն Աղասյանը աթլետիկայի մայրցամաքային բրոնզե մրցաշարում գրավել է առաջին տեղը

Օրերս Հունաստանի Կրետե կղզու Խանիա քաղաքում անցկացվել է աթլետիկայի մայրցամաքային բրոնզե մրցաշար, որտեղ Հայաստանը ներկայաց-

նող կապանցի եռացատկորդ Լևոն Աղասյանը ցույց է տվել 16.64մ արդյունք և գրավել առաջին տեղը։

ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



Փոքր համայնքի մեծ հաղթանակներից

«Մեղրիի Մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի ազատ ոճի ըմբշամարտի սաներ Ալբերտ Սամվելյանը, Միքայել Ստեփանյանը, Արտավազդ Գրիգորյանը, Համո Մովսիսյանը, մարզիչ Յուրիկ Ավետիսյանի հետ մասնակցեցին Կրասնոյարսկի Հանրապետության Բաղաբերդ (հունիսի 3-ից 5-ը) և Բաթումի (հունիսի 6-ից 8-ը) թաղաքներում կայացած ազատ ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշարերին, որոնցից յուրաքանչյուրին մասնակցում էր ավելի քան 300 մարզիկ՝ Կրասնոյարսկից, Ուկրաինայից և Հայաստանից։

Չնայած այն հանգամանքին, որ մեր պատանի մարզիկների համար այս մրցաշարերն

առաջինն էին՝ նրանք վերադարձան հաղթանակներով և 4 մարզիկն էլ Բաղաբերդ թաղաքից իրենց հետ բերեցին 3-րդ կարգի մեդալներ, իսկ Համո Մովսիսյանը դարձավ կրկնակի 3-րդ կարգի մեդալակիր՝ հաղթելով Բաթումի թաղաքում կայացած մրցաշարում ևս։

Շնորհավորում ենք մեր ըմբշամարտիկներին, նրանց ծնողներին, մարզիչ Յուր. Ավետիսյանին և համայնքի բոլոր բնակիչներին. հաղթանակը բոլորինս է։ Համոզված ենք, որ պատանի մարզիկների հաղթարշավը շարունակական է լինելու և նրանք դեռ շատ մեդալներ են նվաճելու։

ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԿՈՐԵԼ Է Հարժիսի միջնակարգ դպրոցի 1983թ. շրջանավարտ Միշա Բաբկենի Պողոսյանի միջնակարգ կրթության N 790333 վկայականը։ Համարել անվավեր։

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԺԱՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ։ ՏՊԱԳՐՎՈՐԷ Ե 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ։

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԷՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում։ Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել։ Ելույթները ներկայացնել մեքենագիր վիճակում։
«ԳՈՎԱԶԴ» - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում։
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է։
® Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր։
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում։
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ։
Տպագրական՝ 1200, գինը՝ 100 դրամ։
Ստորագրված է տպագրության 16.06.2022թ.: